Արձանագրություն №2

<<ՀԱԷԿ-ԳՀԸԱՊՁԲ-1/17>> ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի բացող անդամների կողմից հայտերի բացման

19.05.2017թ ժամը $15^{00}$

Բացողներ՝

ՇՎԱ պետի տեղակալ  Ռոմիկ Մադոյան,
Առաջատար հաշվապահ   Աշոտ  Մկրտչյան:

Օրակարգը՝

1. Բացել <<ՀԱԷԿ-ԳՀԸԱՊՁԲ-1/17>> ծածկագրով գնանշման հարցման  ընթացակարգին **http://www.armeps.am** էլեկտրոնային կայքում ներկայացված հայտերը:

- Գնանշման հարցման  ընթացակարգի հրավերով սահմանված ժամկետում  **http:// www.armeps.am** էլեկտրոնային կայքում բեռնվել են ներքոհիշյալ Մասնակիցների հայտերը,  որոնք սահմանված կարգով հաստատվել  են և ներկայացվել գնահատման հաջորդ փուլ.
- Սահմանված կարգով ներկայացված մասնակիցների հայտեր, որոնք ընդունվել են **http:// www.armeps.am** էլեկտրոնային կայքի կողմից և համարվել են հետագա գնահատման համար ընդունելի.

| հ/հ | Մասնակիցների անվանում |
|---|---|
| 1 | <<Էկոմիքս>> ՍՊԸ |
| 2 | <<Էքսպրես Շին>> ՍՊԸ |
| 3 | <<ՖՈՏՈՆ>> ՍՊԸ |
| 4 | <<ՏՈՐ>> ՍՊԸ |
| 5 | <<ԷՔՍՏԵՐԻԵՐ ԳՐՈՒՊ>> ՍՊԸ |
| 6 | Ա/ձ Վահագն Աբգարի Խաչատրյան |

Բացող՝  Ռ. Մադոյան

Բացող՝  Ա. Մկրտչյան

Արձանագրություն №2

<<ՀԱԷԿ-ԳՀԸԱՊՁԲ-1/17>> ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի գնահատող անդամների կողմից հայտերի գնահատման

ք.Մեծամոր

20.05.2017թ- 24.05.2017թ
ժամը $15^{00}$

Գնահատողներ՝

Հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու՝ ՇՎԱ պետ Մ.Հայրապետյան,

գնահատողներ՝
ՃՏԱԲ պետ Խ.Պողոսյան
ՃՏԱԲ պետի տեղակալ Ա.Ավագյան:

<<ՀԱԷԿ-ԳՀԸԱՊՁԲ-1/17>> ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին

---

(Ն.Հակոբյան)

1. Տեղեկություններ հայտ /գնային առաջարկ/ ներկայացրած մասնակիցների մասին.
2. Տվյալներ էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին:
3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.
4. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա <<ՀԱԷԿ-ԳՀԸԱՊՁԲ-1/17>> ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի 1-ին և այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների մասին:
5. Տեղեկություններ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին:
6. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին:

*Ընդունվել է որոշում՝ կողմ -3, դեմ՝ 0:*

1.Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտ ներկայացրած մասնակիցների մասին.

---

(Ն.Հակոբյան)

1.1 <<ՀԱԷԿ>> ՓԲԸ կարիքների համար Շինանյութի, շինապրանքների և սոսինձների ձեռքբերման նպատակով կազմակերպված <<ՀԱԷԿ-ԳՀԸԱՊՁԲ-1/17>> ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին սահմանված ժամկետում էլեկտրոնային հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

| Հ/հ | Մասնակիցների անվանում |
|---|---|
| 1 | <<Էկոմիքս>> ՍՊԸ |
| 2 | <<Էքսպրես Շին>> ՍՊԸ |
| 3 | <<ՖՈՏՈՆ>> ՍՊԸ |
| 4 | <<ՏՈՐ>> ՍՊԸ |
| 5 | <<ԷՔՍՏԵՐԻԵՐ ԳՐՈՒՊ>> ՍՊԸ |
| 6 | Ա/Ձ Վահագն Աբգարի Խաչատրյան |

*Ընդունվել է որոշում՝ կողմ -3, դեմ՝ 0:*

2. Տվյալներ էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.

---

(Ն.Հակոբյան)

2.1 Մասնակիցների էլեկտրոնային հայտերը www.armeps.am կայքի կողմից համարվել են հետագա գնահատման համար ընդունելի:
2.2 Մասնակիցների էլեկտրոնային հայտում հրավերով պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերը առկա են:
2.3 Մասնակիցներից <<ՖՈՏՈՆ>> ՍՊԸ-ի հայտով ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում են <<ՀԱԷԿ-ԳՀԸԱՊՁԲ-1/17>> ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին /պահանջներին/, իսկ <<ԷՔՍՏԵՐԻԵՐ ԳՐՈՒՊ>> ՍՊԸ-ի, <<Էկոմիքս>> ՍՊԸ-ի, Վահագն Աբգարի Խաչատրյան ա/ձ-ի, <<Էքսպրես Շին>> ՍՊԸ-ի, <<ՏՈՐ>> ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացրած փաստաթղթերը չեն համապատասխանում <<ՀԱԷԿ-ԳՀԸԱՊՁԲ-1/17>> ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին /պահանջներին/, մասնավորապես՝ <<ԷՔՍՏԵՐԻԵՐ ԳՐՈՒՊ>> ՍՊԸ-ն հայտի ապահովման նպատակով ներկայացվող Հավելված 9-ին կից վճարման պահանջագիրը ներկայացրել էր ներկայացման ամսաթիվ դաշտը լրացված, ինչը չի համապատասխանում հրավերով սահմանված <<Վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանների և լրացման կարգի պահանջներին>>, <<Էկոմիքս>> ՍՊԸ-ն հայտի ապահովման նպատակով ներկայացվող Հավելված 9-ից ջնջել է գլխավոր հաշվապահի տվյալների և ստորագրության դաշտը, հետևաբար բացակայում է գլխավոր հաշվապահի ստորագրությունը և վճարման պահանջագիրը ներկայացրել է առանց ստորագրության, Վահագն Աբգարի Խաչատրյան ա/ձ-ն չի լրացրել Հավելված 9-ում պահանջվող ընկերության տնօրենի անձնագրային տվյալների դաշտը, վճարման պահանջագրում չի լրացրել արժույթի կոդը, <<Էքսպրես Շին>> ՍՊԸ-ն հայտի ապահովման նպատակով ներկայացվող Հավելված 9-ից ջնջել է գլխավոր հաշվապահի տվյալների և ստորագրության դաշտը, հետևաբար բացակայում է գլխավոր հաշվապահի ստորագրությունը, <<ՏՈՐ>> ՍՊԸ-ն ընթացակարգի հայտ էր ներկայացրել թիվ 4 չափաբաժնի ենթակետերի համար, ինչը հրավերով սահմանված չէր, հետևաբար սխալ էր լրացված Հավելված 1-ը, Հավելված 2-ը (ընթացակարգը նշել է ՇՀ), Հավելված 3.1-ը (ընթացակարգը նշել է ՇՀ), Հավելված 3.3-ը (ընթացակարգը նշել է ՇՀ), գնային առաջարկը՝ Հավելված 4-ը, Հավելված 4.1-ը:
2.4 Հանձնաժողովը առաջնորդվելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով՝ <<ԷՔՍՏԵՐԻԵՐ ԳՐՈՒՊ>> ՍՊԸ-ի, <<Էկոմիքս>> ՍՊԸ-ի, Վահագն Աբգարի Խաչատրյան ա/ձ-ի, <<Էքսպրես Շին>> ՍՊԸ-ի, <<ՏՈՐ>> ՍՊԸ-ի հայտերը գնահատեց անբավարար, որպես հրավերի պահանջներին չհամապատասխանող, և մերժեց:

*Ընդունվել է որոշում՝ կողմ -3, դեմ՝ 0:*

**3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.**

(Ն.Հակոբյան)

3.1 <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի և ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանող գնային առաջարկ է ներկայացրել 1 մասնակից.

| Չափա-բաժնի համարը | Անվանումը | Չ/մ | Քա-նակ | <<ՖՈՏՈՆ>> ՍՊԸ | |
|---|---|---|---|---|---|
| | | | | Գինը ԱԱՀ-ով | Առանց ԱԱՀ-ի |
| 1 | Դուռ | հատ | 8 | 968.736 | 807.280 |
| 2 | Սալ | հատ | 300 | - | - |
| 3 | Ծխնի | հատ | 30 | - | - |
| 4 | Վրձին | հատ | 915 | 840.594 | 700.495 |

3.2 Մասնակցի գնային առաջարկների հաշվարկման ճշտությունը /հայտերով ներկայացված գնային առաջարկի թվերով և տառերով արտահայտված տվյալների համապատասխանությունը/, ինչպես նաև հաշվարկման թվաբանական ճշտությունները համապատասխանում են /ճիշտ են/:
3.3 Մասնակցի հետ բանակցություններ չեն վարվել:

*Ընդունվել է որոշում՝ կողմ -3, դեմ՝ 0:*

**4. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա <<ՀԱԷԿ-ԳՀԸԱՊՁԲ-1/17>> ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի 1-ին և այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների մասին.**

(Ն.Հակոբյան)

4.1 24.05.2017թ <<ՀԱԷԿ-ԳՀԸԱՊՁԲ-1/17>> ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի որոշմամբ, ներկայացված գնային առաջարկների հիման վրա, ընթացակարգի թիվ 1 և 4 չափաբաժիններով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչվեց <<ՖՈՏՈՆ>> ՍՊԸ-ն:

4.2 Հանձնաժողովը որոշեց հրապարակել նիստի արդյունքները և առաջին տեղ զբաղեցրած մասնակցին առաջարկել երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնելու <<ՀԱԷԿ-ԳՀԸԱՊՁԲ-1/17>> ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը, ինչպես նաև հայտի ապահովման նպատակով ներկայացվող Հավելված 9-ի և դրան կից վճարման պահանջագրի բնօրինակները:

4.3 Հանձնաժողովը որոշեց ՀՀ Կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի՝ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև ընթացակարգի հրավերի <<Ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշին վերաբերող պարբերությամբ նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ:

4.4 Հանձնաժողովը, առաջնորդվելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, ընթացակարգի թիվ 2 չափաբաժինը հայտարարեց չկայացած, ինչպես նաև, համաձայն <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի՝ ընթացակարգի թիվ 3 չափաբաժինը նույնպես հայտարարեց չկայացած:

*Ընդունվել է որոշում՝ կողմ -3, դեմ՝ 0:*

5. **Տեղեկություններ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.**

---

(Ն.Հակոբյան)

5.1 Մասնակիցների կողմից հայտերի վերաբերյալ հարցումներ չեն կատարվել:

6. **Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.**

---

(Ն.Հակոբյան)

6.1 <<ՀԱԷԿ-ԳՀԸԱՊՁԲ-1/17>> ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հաջորդ նիստը հրավիրել 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը ներկայացնելու և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեից եզրակացության ստացման օրվան հաջորդող 2–րդ աշխատանքային օրը ժամը $11^{00}$-ին, <<ՀԱԷԿ>> ՓԲԸ վարչական մասնաշենք հասցեում:

*Ընդունվել է որոշում՝ կողմ -3, դեմ՝ 0:*

Հանձնաժողովի նախագահ՝ ԳՊ/ԳԱՊ գնահատման պատասխանատու — Մ.Հայրապետյան

Անդամներ՝ ԳՊ/ԳԱ գնահատող անձնակազմ — Խ.Պողոսյան

Ա.Ավագյան

Հանձնաժողովի քարտուղար՝ — Ն.Հակոբյան